

**Համաձայնագիր**

համագործակցության և փոխգործունեության մասին

«Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի միջև 2012-2015թթ.

«13» *հոկտեմբեր* 2012թ.

ք. Երևան

**СОГЛАШЕНИЕ**

о взаимодействии и сотрудничестве между Закрытым акционерным обществом «Южно-Кавказская железная дорога» и Лорийской областью Республики Армения на 2012-2015 гг.

г. Ереван

« 13 » октября 2012 г.

«Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «ՀԿԵ» ՓԲԸ), ի դեմս գլխավոր տնօրեն Վիկտոր Ռեբցի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզը, ի դեմս մարզպետ Արթուր Նալբանդյանի, որը գործում է ՀՀ օրենսդրության հիման վրա, մյուս կողմից կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին՝

Закрытое акционерное общество «Южно-Кавказская железная дорога» (далее – ЗАО «ЮКЖД») в лице генерального директора Ребца Виктора Ивановича, действующего на основании Устава, с одной стороны, и Лорийская область Республики Армения в лице губернатора Артура Левоневича Налбандяна, действующего на основании законодательства РА, с другой стороны, именуемые в дальнейшем «Стороны», заключили настоящее Соглашение о нижеследующем:

**I. Համաձայնագրի առարկան**

**I. Предмет Соглашения**

1.1. Սույն համաձայնագրի առարկան է հանդիսանում՝

- տարածաշրջանի տնտեսության և երկաթուղային տրանսպորտի զարգացումը;
- երկաթուղային լոգիստիկայի և քաղաքացիներին մատուցվող տրանսպորտային ծառայությունների որակի և մարզում երկաթուղայինների աշխատանքային պայմանների բարելավումը;
- մարզում ուղևորների, բեռների և օբյեկտների հակահարեկչական պաշտպանության բարձրացման ուղղությամբ միջոցառումների կազմակերպումը;
- մարզում երկաթուղային տրանսպորտի կայուն և անվտանգ աշխատանքի կազմակերպումը;
- մարզի համար անհրաժեշտ ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ծավալների ապահովումը, ինչպես նաև մարզում երկաթուղային ենթակառուցվածքի զարգացումը:

1.1. Предметом настоящего Соглашения является:

- развитие экономики области и железнодорожного транспорта;
- улучшение железнодорожной логистики и качества транспортного обслуживания граждан и условий труда железнодорожников в области;
- организация мероприятий по повышению антитеррористической защищенности пассажиров, грузов и объектов в области;
- организация устойчивой и безопасной работы железнодорожного транспорта в области;
- обеспечение необходимого для области объема перевозок грузов и пассажиров, а также развитие железнодорожной инфраструктуры в области.

1.2. Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերի գործունեությունը կիրականացվի Կողմերի կողմից համաձայնեցված միջոցառումների համատեղ կազմակերպման միջոցով:

## II. Համագործակցության ձևերը և փոխգործունեության կազմակերպումը

2.1. Կողմերը սույն Համաձայնագրի դրույթները իրականացնելու նպատակով պատրաստակամություն են հայտնում՝

2.1.1. 2012-2015թթ. կազմակերպել մարզային երկաթուղային հաղորդակցության արդյունավետության և հարմարավետության բարելավման ուղղությամբ համատեղ աշխատանք;

2.1.2. Կազմակերպել համատեղ միջոցառումներ երկաթուղային հանգույցների և հարակից տարածքների վերակառուցման և բարեկարգման ուղղությամբ;

2.1.3. Համատեղ տրամադրել սոցիալական աջակցության միջոցներ մերձքաղաքային երկաթուղային հաղորդակցուցյամբ ուղևորվելու համար արտոնություններ ունեցող քաղաքացիներին;

2.1.4. Կազմակերպել համատեղ գործունեություն շրջակա միջավայրի պաշտպանության, բնապահպանության անվտանգության, ուղևորների, բեռների և երկաթուղային տրանսպորտի օբյեկտների հակահարեկչական պաշտպանվածության ուղղությամբ, ինչպես նաև երթևեկության անվտանգության բարելավումը և երկաթուղային տրանսպորտում արտադրական տրավմատիզմի կանխարգելումը ապահովող միջոցառումներ:

## III. Համաձայնագրի իրականացման պայմանները և կարգը

3.1. Կոնկրետ նախագծերի նախապատրաստման և իրականացման

1.2. Деятельность Сторон в рамках данного Соглашения будет осуществляться путём совместной организации мероприятий, согласованных Сторонами.

## II. Формы взаимодействия и организация сотрудничества

2.1. Стороны в целях реализации положений настоящего Соглашения выражают готовность:

2.1.1. В 2012-2015 годах организовать совместную работу по повышению эффективности и удобства пригородного железнодорожного сообщения;

2.1.2. Организовать совместные мероприятия по реконструкции и благоустройству железнодорожных узлов и прилегающих территорий;

2.1.3. Совместно предоставлять меры социальной поддержки соответствующим категориям граждан, имеющих льготы для проезда в пригородном железнодорожном транспорте.

2.1.4. Организовать совместную деятельность по охране окружающей среды, экологической безопасности, антитеррористической защищенности пассажиров, грузов и объектов железнодорожного транспорта, а также мероприятия, обеспечивающие повышение безопасности движения и предупреждение непроизводственного травматизма на железнодорожном транспорте.

## III. Условия и порядок реализации Соглашения

3.1. Сроки, условия и формат участия Сторон при подготовке и реализации

դեպքում ժամկետները, պայմանները և Կողմերի մասնակցության ձևաչափը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանվում են առանձին:

3.2. Անհրաժեշտության դեպքում Կողմերը մշակում են սույն Համաձայնագրի 1 կետի իրականացմանն ուղղված միջոցառումների ծրագիր և սահմանում են նախագծային խնդիրների լուծումն ապահովող ժամկետները:

3.3. Համագործակցության կոնկրետ նախագծերի իրականացման նպատակով Կողմերը կարող են ձևավորել համատեղ աշխատանքային խմբեր և հանձնաժողովներ: Աշխատանքային խմբերի և հանձնաժողովների ձևավորման ընթացքում Կողմերը նրանց տալիս են համապատասխան լիազորություններ, նրանց ապահովում են տեղեկատվական և կազմակերպչական աջակցությամբ:

3.4. Կոնկրետ հարցերի լուծման դեպքում Կողմերը մշակում են միջոցառումների ձևաչափը սահմանող համատեղ փաստաթղթեր (համաձայնագրեր, պայմանագրեր, լրացուցիչ համաձայնագրեր, արձանագրություններ և այլն), սահմանում են սահմանված խնդիրների լուծումն ապահովող ժամկետները:

3.5. Սույն Համաձայնագիրը հիմք չի հանդիսանում ցանկացած ֆինանսական և գույքային պարտավորությունների առաջացման և փոխադարձ նախապահանջների ներկայացման համար:

#### IV. Համաձայնագրի գործողության ժամկետները

4.1. Սույն Համաձայնագիրը գործում է Կողմերի կողմից դրա ստորագրման օրվանից 3 (երեք) տարի ժամկետով՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրի հետագա երկարաժամանակ հնարավորությամբ:

4.2. Սույն Համաձայնագրում բոլոր փոփոխությունները պետք է իրականացվեն գրավոր և ստորագրվեն Կողմերի լիազոր

конкретных проектов определяются отдельно в каждом конкретном случае.

3.2. Стороны при необходимости разрабатывают план мероприятий, направленный на реализацию п.1 настоящего Соглашения, и определяют сроки, обеспечивающие достижение поставленных проектных задач.

3.3. В целях реализации конкретных проектов сотрудничества Стороны могут формировать совместные рабочие группы и комиссии. При формировании рабочих групп и комиссий Стороны наделяют их соответствующими полномочиями, обеспечивают им информационную и организационную поддержку.

3.4. При решении конкретных вопросов стороны разрабатывают совместные документы (соглашения, договоры, дополнительные соглашения, протоколы и т.д.), определяющие формат мероприятий, сроки, обеспечивающие достижение поставленных целей.

3.5. Настоящее Соглашение не является основанием для возникновения каких-либо финансовых и имущественных обязательств и предъявления взаимных претензий.

#### IV. Срок действия Соглашения

4.1. Настоящее Соглашение действует в течение 3 (трёх) лет со дня подписания, с последующей возможностью его пролонгации по соглашению Сторон.

4.2. Все изменения настоящего Соглашения должны быть совершены в письменном виде и подписаны

ներկայացուցիչների կողմից:


4.3. Կողմերից յուրաքանչյուրը իրավասու է միակողմանի լուծել սույն Համաձայնագիրը, գրավոր ծանուցելով մյուս Կողմին գործողության դադարեցման նախատեսված ժամկետից քսան (20) օրացուցային օր առաջ: Պայմանավորված ժամանակահատվածում սույն Համաձայնագիրը լիովին պահպանում է իր ուժը:

4.4. Սույն համաձայնագիրը կազմված է ռուսերեն և հայերեն լեզուներով՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:

**V. Կողմերի ստորագրությունները**


«Հարավկովկասյան երկաթուղի»  
փակ բաժնետիրական ընկերություն

Գլխավոր տնօրեն

  
Վ.Ի.Ռեբեց

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ

Մարզպետ

  
Ա.Լ. Նալբանդյան

уполномоченными представителями  
Сторон.


4.3. Каждая из Сторон имеет право в одностороннем порядке расторгнуть настоящее Соглашение, при этом письменно уведомив другую Сторону за 20 (двадцать) календарных дней до ожидаемого прекращения действия. В течение оговорённого времени настоящее Соглашение полностью сохраняет свою силу.

4.4. Настоящее Соглашение составлено на русском и армянском языках, в 2 (двух) экземплярах, имеющих одинаковую силу, по одному для каждой из Сторон.

**V. Подписи Сторон**


Закрытое акционерное общество  
«Южно-Кавказская железная дорога»

Генеральный директор

  
Վ.Ի. Ռեբեց

Лорийская область Республики Армения

Губернатор

  
Ա.Լ. Նալբանդյան